Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 62

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Գ. Արշակյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բաղալյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 10.12.2025թ. «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2026 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» N 170-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Աշտարակ համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը սկսելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Սաղմոսավան բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններն Արտաշավան բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. «Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. «Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 10.12.2025թ. N 175-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Ատոմյան/

9. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

10. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Անտառուտ, Ղազարավան և Օշական բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

12. Աշտարակ համայնքի Ուշի և Օշական բնակավայրերում փողոցի անվանակոչման և փակուղու համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 2 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 10.12.2025թ. «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2026 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» N 170-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 10.12.2025թ. N 170-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և Աշտարակ համայնքի 2026թ.-ի տարեկան բյուջեի 1-6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

/հազ. դրամ/

	Վարչական բյուջե	***Ֆոնդային բյուջե***	***Ընդամենը***
Եկամտային մաս	5873010.9	2000000.0	7873010.9
Ծախսային մաս	5890783.3	3346244.9	9237028.2
Դեֆիցիտ	-17772.4	-1346244.9	-1364017.3
Պահուստային ֆոնդ	500000.0	0	500000.0

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *Աշտարակ համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը սկսելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1.Աշտարակ համայնքում սկսել 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը:

2.Աշտարակ համայնքի 2026 թվականի բյուջեում նախատեսել 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2026թ.-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

3.Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

4. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

5. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանել համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ոլորտները (կապիտալ բնույթի)՝ որպես առաջնահերթություն:

6. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2026-2028թթ.-ի ՄԺԾԾ-ում, 2026թ. տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում.

2) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - Հարկային արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին» օրենքների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի, 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն /հավելված 1/:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - *Սաղմոսավան բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններն Արտաշավան բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյան և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.2 կետի պահանջներով, Սաղմոսավան բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը վերապահել Արտաշավան բնակավայրի վարչական ղեկավարին:

Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 10-ից:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - *«Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման Հավելված 2-ի մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

- 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

1	մինչև 500 բնակչություն ունեցող վարչական տարածք	3	270000	810000
2	501-1500 բնակչություն ունեցող վարչական տարածք	10	350000	3500000

3	1501-3000 բնակչություն ունեցող վարչական տարածք	6	370000	2220000
4	3001-ից ավել բնակչություն ունեցող վարչական տարածք	7	400000	2800000

Ընդամենը	**38**		**14080000**

- 3-րդ և 4-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

3. Սպասարկող անձնակազմ				
1	Տնտեսվար	1	250000	250000
2	Գործավար	1	350000	350000
3	Գործավար	1	200000	200000
4	Խմբակցության գործավար	3	200000	600000
5	Համակարգող	6	320000	1920000
6	Արխիվի պատասխանատու	1	200000	200000
7	Զին. և զորահավաքային մասնագետ - գործավար	3	240000	720000
8	մինչև 500 բնակչություն ունեցող վարչական տարածք օպերատոր	4	170000	680000
9	501-1500 բնակչություն ունեցող վարչական տարածք օպերատոր	11	200000	2200000
10	1501-3000 բնակչություն ունեցող վարչական տարածք օպերատոր	12	200000	2400000
11	3001-ից ավել բնակչություն ունեցող վարչական տարածք օպերատոր	21	200000	4200000
12	Վարորդ /ավտոբուսի/	1	200000	200000
13	Վարորդ	1	310000	310000
14	Վարորդ /աշխատակազմի/	1	200000	200000
15	Վարորդ	3	140000	420000
16	Հավաքարար	2	180000	360000
17	Ցրիչ	2	230000	460000
18	Էլեկտրիկ	2	280000	560000
19	Պահակ	1	200000	200000
20	Բանվոր	1	200000	200000

21	Աշտարակի քաղաքային գերեզմանատների պատասխանատու	1	230000	230000
22	Վարչական շրջանների գերեզմանատների պատասխանատու	1	350000	350000
23	Քաղաքաշինական բնույթի տեխնիկական աշխատանքներ կատարող	1	200000	200000
24	Վարորդ /ներհամայնքային ավտոբուսի/	1	260000	260000
25	Տեղեկատվական տեխնոլոգիաների պատասխանատու	1	280000	280000
26	Համայնքային հիմնարկների տեխնիկական սպասարկում իրականացնող	2	410000	820000
27	Տարաբանվոր	4	230000	920000
28	Ֆուտբոլի մարզիչ	6	105000	630000
Ընդամենը		**95**		**20320000**

4.Քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմ				
1	Անասնաբույժ	5	130000	650000
ԸՆԴԱՄԵՆԸ		**239**		**60542000**

2. Սույն որոշման 1-ին մասի 1-ին ենթակետն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 10-ից:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - *«Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 10.12.2025թ. N 175-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի,

սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, «Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 10.12.2025թ. N 175-Ա որոշման հավելված 23-ը և 26-ը շարադրել նոր խմբագրությամբ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, ուժը կորցրած ճանաչել «Համայնքային սեփականութուն հանդիսացող շարժական գույքերն աճուրդային կարգով օտարելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 09.09.2025թ. N 107-Ա որոշման հավելված 1-ի 7-րդ կետը:

Համաձայնություն տալ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի ՀԿՀ-ին պատկանող MERCEDES-BENZ մակնիշի (տիպարը՝ C 180) 877 CM 61 պետհամարանիշի մեքենան անհատույց օգտագործման նպատակով «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Հովհաննես Արիստակեսյանի ներկայացուցիչ Ազատ Հովհաննիսյանի 19.11.2025թ. N 16721, Սպարտակ Մուրադյանի ներկայացուցիչ Արմեն Շահբազյանի 26.11.2025թ. N 17098, Աշոտ Հովհաննիսյանի ներկայացուցիչ Արմեն Շահբազյանի 17.12.2025թ. N 18216 և Գոհար Նիկողոսյանի ներկայացուցիչ Հովհաննես Գաբրիելյանի 07.01.2026թ. N 125՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0332-0006 ծածկագրով, Հովհաննես Ռուբենի Արիստակեսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,1334հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/:

Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0231-0016 ծածկագրով, Սպարտակ Ստեփանի Մուրադյանին, Ազատուհի Վաչագանի Սահակյանին, Արուսյակ և Քրիստինե Սպարտակի Մուրադյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0,13171հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/:

Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0217-0014 ծածկագրով, Աշոտ Լենդրուշի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,094հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /վարելահող/

նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/:

Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0070-0043 ծածկագրով, Գոհար Սերժիկի Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,1356հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության /ջերմոց, կաթսայատուն և պարիսպ/ կառուցման համար/:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Անտառուտ, Ղազարավան և Օշական բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.11.2025թ. N 2/փ-371 և N 2/փ-243 և N 2/փ-376, 11.12.2025թ. N 2/փ-404 դրական եզրակացությունները՝ Անտառուտ, Ղազարավան և Օշական բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի Անտառուտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-010-0109-0012 ծածկագրով 0,2255հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության

վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-068-0001-0025 ծածկագրով 0,15հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

3. Հաստատել Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-113-0278-0186 ծածկագրով 0,09925հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության փոփոխությունը:

4. Բոլոր կետերում նշված փոփոխությունները սահմանված կարգով արտացոլել Աշտարակ համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում, Անտառուտ, Ղազարավան և Օշական բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 11</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Նորայր Աբգարյանի լիազորված անձ Արարատ Բաղդասարյանի 18.12.2025թ. N 18294, Հակոբ Ադամյանի 09.01.2026թ. N 237, Էդգար Դավթյանի 13.01.2026թ. N 321 և «ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Արա Բաղդասարյանի 15.01.2026թ. N 459 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Կոշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-061-0216-0079 ծածկագրով 4,20209հա հողամասը /այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով՝ 3 500 000 /երեք միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող 02-061-0216-0063 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի սեփականատեր Նորայր Անդրանիկի Աբգարյանին:

2. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Նաիրյան փողոց, N 12/2 հասցեում գտնվող, 02-001-0178-0117 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 6,17քմ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0178-0110 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Հակոբ Հարությունի Ադամյանին:

3. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 44-րդ փողոց, N 1 հասցեում գտնվող, 02-116-0028-0008 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 519,8քմ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ /կադաստրային արժեքի 150%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 07-050-0028-0006 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Էդգար Նորիկի Դավթյանին:

4. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու հրապարակ, N 8/2 հասցեում գտնվող, 02-001-0063-0118 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 1584,6քմ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 35 000 000 /երեսունհինգ միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0063-0117 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր «ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ-ին:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

* Լ Ս Ե Ց Ի Ն – 12* - *Աշտարակ համայնքի Ուշի և Օշական բնակավայրերում փողոցի անվանակոչման և փակուղու համարակալման մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Ուշի բնակավայրում գտնվող Մ 3 միջպետական ճանապարհի հատվածը անվանակոչել «Երևան-Վանաձոր մայրուղի» և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Ուշի բնակավայր, Երևան-Վանաձոր մայրուղի:

2. Աշտարակ համայնքի Օշական բնակավայր Վ. Ամատունու փողոցից սկիզբ առնող փակուղուն տալ 2 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Վ. Ամատունու փողոց, 2-րդ փակուղի:

3. Ուշի և Օշական բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2026 թվականի հունվարի 21-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ	_____
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ	_____
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	_____
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	_____
ՆԱՋԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ	_____
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ	_____
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ